# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3
## N 11/46-2021

ք. Երևան «05» 02 2021 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Մանանկ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>>, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **52 919 050 (հիսուներկու միլիոն ինը հարյուր տասնինը հազար հիսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ** | **«Մանանկ» ՍՊԸ** |
| **ք.Երևան, Նալբանդյան104** | **ք. Երևան, Ավան Առինջ, 2 մկրշ. 2/10, 39** |
| **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** |
| **Հ/հ 900011301067** | **Հ/հ 1150009060790769** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 01016995** |
| **Տնօրենի տեղակալ** | **Տնօրեն** |
| **Ա. Հակոբյան** | **Վ. Մելիք-Սարգսյան** |

Հավելված N 1
« 05 » 02 2021թ. կնքված
N 11/96-2021 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** | | | |
| | | | | | | | | | | | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 31.03.2021թ | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.06.2021թ | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 270 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.09.2021թ | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 340 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 15.12.2021թ |
| 4 | 35811160/522 | մարտական հանդերձանք | «Մանանկ» ՍՊԸ | **Ձմեռային կոստյում կեպիով, կոմուֆլյաժ գործվածքից /սահմանապահ զորքերի/:** Ձմեռային կոստյում կեպիով բամբակյա գունաքողարկման թեյի C-9961 արտիկուլի <<Ռիպստոպ>> տեսակի կամ համարժեք ամրապնդած ջրայուղաանդրադարձնող ծածկույթով գործվածքից, 1մ$^2$ մակերեսային խտությունը՝ 195գր, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, տաք ներդիրով: Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: **Բաճկոնը** ուղիղ ձևացքով է, թիկունքը և | լրակազմ | 20960,00 | 10480000 | 500 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 500 | 0 | 0 | 500 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առաջամասը անջրաթափանց, քամապաշտպան շերտով, առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով, երկկողմանի մզդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևերը՝ անջրաթափանց արհեստական կտորով միակողմանի մզդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով, երկու կարանի: Առաջամասերում մշակված են 2 կողային վրադիր կափույրով փակվող գրպաններ, որոնք կողքից բացվածքով են: Գրպանի լայնությունը 20սմ, երկարությունը 22սմ, կափույրի լայնությունը 6սմ, որոնք կոճկվում են գաղտնի կոճվածքով՝ 2 օղակ կոճակով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0.1 սմ կարի լայնությամբ: Բաճկոնի թևերը բաղկացած է երեք կտորից, առանց ուսագլխի կարի /ռեկլամ/, կարված են փակ զույգ կարերով: Թևերի վերին հատվածում մշակվում են կափույրով փակվող թեք վրադիր գրպաններ, լայնությունը 14սմ, երկարությունը 15սմ, կափույրի լայնությունը 6սմ: Կափույրները կոճկվում են 2սմ լայնությամբ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կպչուն ժապավենով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ, կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև /երկու անկյունները շեղ/ արմնկակալներ: Թևքերի ներքևի մասում մշակված են թևքի լայնությունը կարգավորող պատաններ, որոնց կարգավորումն իրականացվում է կպչուն ժապավենով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> թևքանշանը: Բաճկոնի կոկետկայից 3սմ ներքև աջ կողմում կարվում է ժապավեն <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>>, իսկ ձախ կողմում կարվում է 13սմx2.5սմ ձևաչափի ինքնակպճուն ժապավեն <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> գրառմամբ: Բաճկոնը միալանջ է, գաղտնի կենտրոնական կոճկվածքով, կոճկվում է 70 սմ երկարությամբ, խոշոր ատամներով /տրակտոր/ շղթայով: Բաճկոնի շղթան ծածկվում է 7.5 սմ լայնությամբ կափույրով, որը կոճկվում է 5 հատ 2.5x7 սմ ձևաչափի կպչուն ժապավենով /լիպուչկա/: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Բաճկոնի գոտկատեղի ուղղությամբ մշակվում է գաղտնի գոտկանման պարան իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար: Բաճկոնի վզատեղը մշակված է կտրած կանգունակով օձիք: Օձիքի լայնությունը միջնամասում 13սմ, ներսի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կողմից մշակված դեղնականաչավուն գույնի ֆլիս տեսակի կտորով, որի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի հետադարձ երեսին մշակվում է եզրեր 6սմx2.5սմ կպչուն ժապավենով փակվող տոպրակացու կտոր, որի մեջ տեղադրվում է գլխանոցը /կապիշոն/: Գլխանոցը կարվում է երեսացու կտորից մեջը աստառ, որը բաղկացած է 3 կտորից, դիմային մասի երկու կտորները երկարացված են յուրաքանչյուր կողմից 16սմ, որոնց յուրաքանչյուրի վրա կարված է 2 զուգահեռ կպչուն ժապավեններ 8սմx2.5սմ ձևաչափի, նախատեսված դեմքի ծնոտային հատվածը ցրտից և քամուց պաշտպանելու համար, դիմային մասով անցնում է գաղտնի 3մմ կլոր էլաստիկ ժապավեն, երկու կողմից պլաստմասե կարգավորիչներով: Գլխանոցի հետևամասը վրադիր կտորով է, որի միջով անցնում է 3մմ կլոր էլաստիկ ժապավեն /ռեզին/ պլաստմասե կարգավորիչով և 10սմx3.5սմ ձևաչափի կարգավորիչ լեզվակով, որը ամրանում է գլխանոցին ինքնակպչուն ժապավենով: Գլխանոցի վրա՝ օձիքի միացման կարից 1.5սմ վերև մշակվում է 3 հատ 6սմx2.5սմ կպչուն ժապավեն տոպրակացու կտորի կռճկման համար: Լանջափեշի ձախ կողմում շղթային զուգահեռ մշակված է գաղտնի ծոցագրպան ատրճանակի համար, որը կոճկվում է 16սմ երկարությամբ շղթայով: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով: Բաճկոնի աստառի ձախ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է ինքնակպչուն ժապավենով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ դեղնականաչավուն գույնի կոճակ օղակով: **Տաբատը՝** մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 0.6 սմ լայնությամբ զարդակարով: Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ, յուրաքանչյուրը 75սմx1.5սմ ձևաչափի: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, շղթայով և 2 հատ 18 մմ տրամագծով օղակ կոճակով, գոտու վրա: Տաբատի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է անջրաթափանց գործվածքից աստառի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Հետնամասում գոտին լայնացրած է և ամբողջությամբ զարդակարված: Առաջամասում կողքերից կափույրով երկծալ վրադիր գրպաններ, լայնությունը ներքևում՝ 20սմ, վերևում՝ 22սմ, երկարությունը 25սմ, կափույրի լայնությունը 7սմ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 հատ ինքնակպչուն ժապավենով: Վրադիր գրպանների եզրերը, ծնկակալները զարդարված են զույգ ասեղ զարդակարով: Տաբատի փողքային մասի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծալվածքի միջով անց է կացվում կտորից քուղեր, որոնց ծայրերը դուրս են գալիս ծալվածքի վրայի անցքերից: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: **Ձմեռային կեպին** բաղկացած է կոշտ հովարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալներով ծոծրակամասից: Երեսացուն՝ նույն կոստյումի գունաքողարկված գործվածքից: Աջ ականջակալին կարվում է՝ 8 սմ երկարությամբ տիսմայե ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի եզրակարից դեպի ներս՝ 1-ինը 2սմ, 2-րդը՝ 3-4սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա ամրացվում է՝ 1 հատ մետաղյա կոճգամի ամրացվող մասը: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Ականջակալներով ձմեռային կեպին կարվում է մոխրագույն արհեստական մորթուց, 890 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, մորթախավի բարձրությունը՝8-10մմ: Ականջակալ-ծոծրակամասի մորթին մշակվում է եզրերից 5-7մմ հեռավորության վրա՝ զարդակարով: Ներսամասը 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակարվում է 142 արտիկուլի կամ համարժեք մոխրագույն կամ պաշտպանական գույնի բամբակյա կտորից (բիազ), ներսից տաքացնող ներդիրը մշակված է 100 գրամանոց | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սինտեպոնով: Հովհարի ներսից ներկարվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Եզրից դեպի ներս 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը, սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8,8 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 54 չափսի գլխարկից պետք է լինի 8,2 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն և մեջտեղի մասում 5,5 սմ լայնությամբ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից, օվալաձև դեղնականաչավուն գույնի գլխարկանշան՝ 32 ճառագայթով: Կենտրոնական մասը ՀՀ դրոշի շերտագծերից՝ վրայից հնգաթև աստղ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: **Փաթեթավորումը**՝ գործարանային արկղերով, մեկ արկղի մեջ՝ երեք շարք, յուրաքանչյուր շարքում 18 հատ առանձին-առանձին՝ ընդամենը 54 հատ: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Ժապավեն <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
